# ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված ՀՍԽՀ Մարտունու շրջանային գործադիր կոմիտեյի 1936 թ. փետրվարի 1-ի նախ. նիստում

1936
ՄԱՐՏՈՒՆԻ

14 FEB 2018

Գլավլիտի լիազոր Գ· 628 տիրաժ 300 1-3880գր

Բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը՝ մտցնելով և պահպանելով կատարելու [illegible] թյուն, խորը հերկ, վոչնչացնելով մոլախոտերը, ընտրելով ու լավ մշակելով ցելերն ու աշնանավարը, ժամանակին ու խնամքով կատարելով տեխնիկական բույսերի շարամեջ մշակումը, ժամանակին բուգտալով բամբակը, պարարտացնելով հողը՝ թե անասնապահական աղբանքային ֆերմաների և թե կոլտնտեսականի անտեսության գոմաղբով, հանքային պարարտանյութերով, պայքար մղելով գյուղատնտեսական վնասատուների դեմ, ժամամանակին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորստի, պահպանելով ու մաքրելով վոռոգիչ կառուցումները, պահպանելով, անտառները տնկելով դաշտերը պահպանող անտառաշերտեր, խստիվ պահպանելով տեղական հողային օրգանների սահմանված-ագրոտեխնիկական կանոնները, (Գյուղատնտեսական-արտելի օրինակելի կանոնադրությունից)։

## 1. ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1. Կոլտնտեսությունների հացահատիկային կուլտուրաների բոլոր տեսակի սերմերը զտել նախորոք կալի ժամանակ տրիերների

միջոցով, իսկ հաճարը տրյերով չզտվելու դեպքում զտել ձեռքով։

Ծանոթություն.— Մոլախոտի սերմերը և պոչուկը չանջատվելու դեպքում զտել ձեռքով տախտակների վրա (հաճար)։

2. Կոլտնտեսությունների վարչությունները պարտավոր են նախօրոք պատրաստել սերմացույի հատուկ պահեստներ, բոլոր տեսակի հարմարություններով սպիտակացրած, ախտահանած և զանազան վնասատուներից պաշտպանված։

3. Սերմացույի համար ունենալ հատուկ պահեստներ։

4. Մ.Տ. Կայանի լաբորատորիայի միջոցով կազմակերպել սերմերի ծլունակության և տնտեսական պիտանիության որոշելու գործը, այն հաշվով, որպեսզի առաջին ստուգումը ավարտվի դեկտեմբերին, իսկ 2-րդ ստուգումը՝ 36 թվի մարտի մեկին։

5. Ցանքի համար պիտանի համարել հացահատիկային այն սերմացուն, որի ծլունակությունը 96 տոկոսից իսկ մաքրությունը 93 տոկոսից բարձր է։ Սահմանված տոկոսներից ցածր սերմացուն համարել վոչ կոնդիցիոն և թույլատրել կատարել միջ կոլխոզային փոխանակում։ Արգելել



հիշյալ տոկոսներից ցածր սերմացույի ցանելը։

6. Սերմերի ախտահանումը կատարել նախօրոք՝ չոր ախտահանումը գարնանացանից 2—3 ամիս առաջ, իսկ թաց ախտահանումը ցանքսից 1—2 օր առաջ։ Աշնանացանի համար չոր ախտահանում կատարել ցանքսից 10—15 օր առաջ։

7. Չոր ախտահանում կատարել բացառապես ախտահանիչ մեքենաներով, իսկ թաց ախտահանում նախօրոք պատրաստված հեղուկների մեջ իջեցնել սերմով լիքը պարկերը։

8. Հանձնարարել ագրոպերսոնալին թույլ չտալ առանց վկայականի սերմացու ցանելը։

## 2. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԱՆՔՍԻ ՀԱՄԱՐ

1. Վաղ գարնան դաշտերը բացվելուց անմիջապես հետո, ձեռնարկել պայքարի գործը մկների դեմ։ Թունավորման գործը վերջացնել շրջանի ցածրադիր մասերում 5-ը ապրիլի, լեռնային մասերում 15-ը ապրիլի։ Վարագել թե վարելահողերի ամբողջ տարածությունը թե խոտհարքերը և թե արոտավայրերը։

2. Շրջանում գյուղատնտեսական բարդ-

գործիքները օգտագործելու համար. առաջարկել բոլոր գյուղխորհրդի նախագահներին, կոլվարչ. նախագահներին և բրիգադավարներին շրջանի հարթավայրում գտնված ամբողջ հողամասերի վրա վերացնել միջնակները, հավաքել քարերը, ստեղծել մեծ մասիվներ մեքենայացման համար։ Արգելել արտերի մեջ քարի կույտեր թողնելը։

Վերոհիշյալ աշխատանքների ժամկետը սահմանել 15-ը ապրիլի։

3. Պատրաստել և վերանորոգել ամբողջ վոռոգման ցանցը։ Առաջարկել բոլոր կոլ. վարչ. նախագահներին՝ մաքսիմալ կերպով օգտագործելու սարերի ձյան ջրի պաշարը։ Այս նպատակի համար կառուցել նոր ջրամբարներ սարերում (Վաղաշեն, Մարտունի, Վ. Ղարանլուղ, Թազաքյանդ)։ Անջրդի հողերը ջրովի դարձնելու նպատակով հանել նոր առուներ (Ն. Ալիչալու, Զորագյուղ, Զոլաքար, Ն. Գյոզալդարա)։

4. Ավարտել բոլոր ճանապարհների վերանորոգումը, կամուրջների կառուցումը և մաքրումը թե գյուղամիջյան և թե հանդամիջյան, այն հաշվով, որ ավարտվի 20-ը մարտի։ Կատարել հանդամիջյան ճանապարհների լայնացում, վորտեղ յենթարկվում է մեքենայացման։

5. Այժմվանից ձեռնարկել տեղական պա



րարտանյութերի օգտագործելու աշխատանքները, այն հաշվով, որ գարնանացանի ընթացքում դաշտ փոխադրվի 14000 տոննից ավելի աղբ։ Վորպես պարարտանյութ օգտագործել բացի գոմաղբից նաև փոշին, տնային գիբիլը, հին քանդված շինությունների հողը և փողոցների աղբը։ Աղբերի կուտակումը գյուղում վերջացնել 10-ը փետրվարի։

6. Աղբը պահել ծածկի տակ կամ քանդված շինությունների մեջ։

7. Պարարտանույթերի փոխադրումը վերջացնել գարնանացանի սկզբից 2 օր առաջ։

8. Սարերի արտերը պարարտացնելու համար ոկտագործել մոտակա յայլաղների աղբերը։

9. Պարարտանյութերը մտցնել կրկնավարից և փոցխից առաջ։

10. Տեղական աղբով պարարտացնել յուրաքանչյուր հեկտարին 20 տոնից վոչ պակաս (50-55 սայլ)։

11. Գոմաղբով պարարտացնել հնարավորության սահմաններում աշնանը։ Իսկ գարնանը—գոմաղբը մտցնել վարից առաջ։

### 3. ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

1. Գարնանացանի համար վար կատարել 18.22 ս.մ. խորությամբ, իսկ տեխնիկական

կուլտուրաների համար ճակնդեղ, կարտոֆիլ 25 սանտիմետր խորությամբ։

2. Վարը կատարել բացառապես միմիայն գութանով։

Ծանոթություն. Թեք հողակտորներում թույլատրել, շրջվող գութանի բացակայության դեպքում, վարը կատարել արորով ագրոնոմների յեվ գյուղ խորհրդների թույլատվությամբ։

3. Կրկնավար կատարել բազմախոփան գութաններով կամ արորով 13-15 ս.մ. խորությամբ։

4. Արգելել ցելերի վրա (առանց կրկնավարի) ցանել յեվ զիգզագով ծածկվող ցանքն։

5. Գարնանացանը կատարել ցանքաշրջանառություն անցկացված կոլխոզներում, միմյան համաձայն 36 թ. կազմված փոխանցիկ տախտակների։

6. Գարնանացանի ավարտման վերջնական ժամկետ սահմանել ամբողջ շրջանի համար 25 օր, վորից հացահատիկային կուլտուրաների համար 18-20, մյուս կուլտուրաների համար 4-5 օր։

7. Սահմանել մեկ հեկտարի ցանվելիք սերմացույի հետեվյալ նորմաները։

ա) ցորեն շարքացան 1,6-ից 1,75 ցենտներ։
բ) գարի շարքացան 1,6. . . . 1 9 . .



գ) տարեկան . . . 1,6 ցենտ. 2 ցենտ.
դ) հաճար . . . . . . . . . . . 2 . . .
յ) կարտոֆիլ 20 ցենտներ
զ) կորնգան 1,2 . . . .

8. Արգելել շրջանի կողմից իջեցված շարքացանի պլանը շաղացանով փոխարինելը։

9. Ցանքը կատարել նախապես հերկված հողերում։ Շաղացան կատարելու դեպքում սերմը ծածկել զիկզագ փոցխով յերկու յերես իրար հակառակ փոցխելով։ Քարքարոտ յեվ կոշտ տեղերում սերմը ծածկել տափանով։

10 Խոզանավարի դեպքում կատարել արորով կրկնավար։

## 4. ՑԱՆՔԻ ՄՇԱԿՈՒՄ,

1. Աշնանացանների քաղհանը սկսել գարնանացանից անմիջապես հետո, իսկ գարնանացանը թփակալման շրջանում։ Ամբողջ հացահատիկը քաղհանել 2-3 անգամ։ Քաղհանի աշխատանքները վերջացնել նրանց խողովակակալման սկզբին։

2. Քաղհանված մոլախոտերը հեռացնել արտերից։ Արգելել մոլախոտերը միջնակներում և արտի պլլներում կուտակելը։

3. Հացահատիկների քաղհանը կատարել

ձեռքով իսկ խոր արմատներով զարգացած մոլախոտերի դեպքում գործածել հատուկ պատրաստված սուր դանակներ։

4. Կազմակերպել ամբողջ ջրովի ցանքսերի ջրելու աշխատանքները 2-3 անգամ սեզոնին։ Առաջին ջուր տալ թփակալման վերջին շրջանից մինչև խողովակակալելը, իսկ վերջին ջուրը հատիկ կազմելու մոմենտին։

5. Արգելել ցանքսերի մեջ անասուններն արածացնելը։

6. Ցանքսերի վրա սահմանել մշտական հսկողություն (հսկիչ պոստեր) վնասատուները յերևալու դեպքում ձեռնարկել շտապ միջոցներ վերացնելու։

## 5 ՑԵԼԵՐ

1. Մոլախոտերի դեմ պայքարելու, բարձր բերքատվությունն ապահովելու յեվ վերջնականապես պոչուկը մեր շրջանից վերացնելու համար սահմանել.

ա) բոլոր առուների յեվ ճանապարհների յեզրերների մոլախոտերը քաղել մինչև նրանց ծաղկելը, Սեզոնի ընթացքում 2 անգամ:

2. Ամբողջ աշնանացանը կատարել վաղ ցելի վրա։ Վաղ ցելը շարունակել գարնանա



ցանի հետ զուգընթաց և ավարտել մինչև մեկը հունիսի։

3. Ամառային ցելը կատարել խոզաններն անմիջապես քաղելուց հետո նրանց ծաղկման շրջանում։

4. Սեզոնի ընթացքում ցելերը կուլտիվացիայի յենթարկել մեկից յերկու անգամ։

Առաջին անգամ ամբողջ վաղ ցելը փոցխել զիկզագներով և այդ աշխատանքը ավարտել մինչև 20 հունիսի։ 2-րդ անգամ՝ բազմախոփանի գութաններով կատարելով կրկնավար 8—10 մ. խորությամբ, այդ աշխատանքները ավարտել 15-ը հունիսի։

5. Ցելերի կուլտիվացիան կատարել անձրևներից հետո։

6. 1937թ. գարնանացանը լրիվ կերպով ցելերով ապահովելու համար կոլխոզում մնացած ամբողջ հողերի տարածությունը դնել ցրտահերկի տակ և աշխատանքները վերջացնել մինչև 10-ը հոկտեմբերի։

7. Ցելերի վարը կատարել 20-25 սմ. խորությամբ։

## 6. Խ Ո Տ Հ Ո Ւ Ն Ձ

1. Ամբողջ ցանովի խոտհարքները սեզոնի ընթացքում 2 անգամ փոցխել (գարնանացանի սկզբից և առաջին հնձից հետո)։

ցանովի խոտերը քաղել 25 տոկոսով ծաղկման շրջանում։

3. Սահմանել ամբողջ ջրովի խոտհարքների վրա ջուր բաց թողնելն անընդհատ հոսելու 30-ից-40 օր։

4. Կազմակերպել ագրիջայի խոտհարքների ջրելու գործը (Վերին Աղբաման, Վ. Ղարանլուղ, Աստղաձոր, Զոլաքար, Ծովինար

5. Բնական խոտհարքները քաղել նրա ծաղկման վերջին շրջանում յերբ հասունացել է խոտը։

6. Թե ցանովի յեվ թե բնական խոտերը հավաքել միմիյան թափուլ և խոռոմի ձեվով։ Արգելել բանոքիով խոտ հավաքելը։

7. Արգելել թաց խոտը խոռոմ անել և դեզ դնել։

8. Խոտի դեզերը իրարից 20 մետր հեռավորության վրա դասավորել յեվ դեզերի շուրջը ստեղծել մշտական ջրամբարներ լիքը ջրով։

9 Ջրով ապահոված խոտահարքները (Ն. Գյոզալդարա, Զոլաքար, Աստղաձոր, Մարտունի, Վ. Ղարանլուխ, Յերանոս), անմիջապես առաջին հնձից հետո նախապատրաստել 2-րդ հնձին ջրել և զուռուխ անել։



10. Ամբողջ խոտհարքի տարածությունները գարնան սկզբից զուռուխ անել։

## Դ. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ.

1. Նախորոք գյուղատնտեսների և կոլնախագահների միջոցով ընտրել ցանքսերի միջից սերմացույի համար պետքական տարածությունները և այդ հնձել առանձին։

2. Պարտավորեցնել բոլոր կոլ. վարչ. նախագահներին յեվ բրիգադավարներին բերքահավաքի հետ զուգընթաց ընտրության միջոցով հավաքել տեղական ցորենից ԿՈՒՆԴԻԿ շրջանի համար պետքական (Յերինացեյում) տեսակը, այն հաշվով, վոր հաջորդ տարվա գարնանացման ցորենի 20 տոկոսից վոչ պակաս լինի տեսակավոր սերմացու։

3 Վերանորոգել յեվ ձեռք բերել բերքահավաքի համար անհրաժեշտ գործիքներ յեվ ինվենտար, այն հաշվով, վոր դա վերջացված լինի 15 օր բերքահավաքից առաջ։

4. Հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը սկսել հասունացման հետևյալ շրջաններում՝ ա. ուկրայինկան մոմային հասունացման շրջանում 2-3 օր, Ուկրայինկայի հունձը սկսել վաղ առավոտվանից յեվ վերջացնել ուշ յերեկո։

Ծանոթություն. Արգելել հասունացած արտը ցերեկվա շոգին հնձելու։

բ. Տարեկանը հնձել լրիվ հասունացման շրջանում 3-5 օրում։

գ. Գարնան ցորենը լրիվ հասունացման շրջանում 7-8 օր։

5. Սահմանել ամբողջ շրջանի հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի վերջնական ժամկետ 13-օր։

6. Հացահատիկային կուլտուրաների հունձը սկսել առանձին հողակտորներից-այն մասից, վորտեղ հասունացել ե առաջին անգամ. չսպասելով մինչև արտի լրիվ հասունանալը։

7. Արգելել կծղած արտերը շոգ ժամանակ հնձելու։

8. Հնձի հետ զուգընթաց կապել ամբողջ հացահատիկը պատրաստված ջոկերով յեվ դնել բարթոցներ։

9. Արգելել թաց խուրձերը բարթոց դնելը և կալ փոխադրել։

10. Սահմանել հասկերի պարտադիր հավաքումը թե հնձվորների հետեվից յեվ թե սայլերի հետեվից։



11 Պարտավորեցնել բոլոր կոլ. վարչ. նախագահներին հացահատիկ փոխադրող սայլերի տակ փռել փալասներ կամ խոտից հյուսված խսիրներ։

12. Վարաքված հողամասերի [illegible] հետո՛ անմիջապես անցկացնել յերես [illegible] 8-10 ս. մ. խորությամբ։

## 8. ԿԱԼՍՈՒՄ

1 Կալսման աշխատանքները սկսել բերքահավաքի հետ զուգրթաց։

2. Կալի մեջ կազմել դեզեր իրարից 15—20 մետր հեռավորությամբ։

3. Մեկ կամին օրեկան առաջադրանք սահմանել 2 սայլ։

4. Ծեծած հացահատիկը նույն օրը փոխադրել պահեստ։

5 Կալերում կազմակերպել բոլոր տեսակի հակահրդեհային միջոցներ այն ե՝ փորել փոսեր, վորոնց մեջ մշտական ամբարված լինի ջուր։ Ցեղանները յեվ վեդրոնները մշտական կուտակված լինի մի տեղում։

10. Սահմանել կալերը մտնելու համար հատուկ վկայականի ձևեր։ Թույլ չտալով կողմնակի մարդկանց մուտքը կալում։

## 9. ԱՇՆԱՆԱՑԱՆ

1. 1936 թ. Աշնանացանը կատարել ցելերի վրա յեվ նախորոք գոված յեվ ախտահանված սերմացուներով։

2. Ցանքսի վերջնական ժամկետ սահմանել՝ ուկրաինկայի համար 10-ը սեպտեմբերի, տարեկանի համար 20-ը սեպտեմբերի:

3. Պարտավորեցնել բոլոր կոլվարչ. նախագահներին, բրիգադավարներին Ջրովի հողամասերում ցանքից 5 որ հետո անձրև չլինելու դեպքում Ջրել ցանքսը։

## 10. ԿԱՐ ՈՖԻԼԻ ՅԵՎ ՃԱԿՆԴԵՂԻ ՄԱՍԻՆ

1. Կարտոֆիլը մշակել ավազախառն թեթև բերի և պարարտ հողերում։

2. Կարտոֆիլի և ճակնդեղի համար հողը նախապատրաստել աշնանից 22-25 ս. մ խորությամբ վարելով։

3. Կարտոֆիլի և ճակնդեղի հողերը պարարտացնել տեղական պարարտանյութերով։ Հեկտարին 30 տոննից վոչ պակաս։

4. Կարտոֆիլի սերմացուն ընտրել մաքուր, հիվանդություններից զերծ, առողջ և միջին մեծությամբ։

5. Կարտոֆիլի ցանքսը կատարել գարնանացան հացահատիկային կուլտուրաների



հետ զուգընթաց և վերջացնել 25-ը ապրիլի։

6. Ճակնդեղի ցանքը կատարել բացառապես շարքացանով։

7. Կարտոֆիլի միջ շարքային տարածություն սահմանել 55—65 սանտիմ. իսկ բույսերի հեռավորությունը 35—40 սան.։

8. Արգելել կարտոֆիլի ցանքը կտորներով ցանել։

9. Պարտավորեցնել բոլոր դաշտավարական բրիգադիրներին ցանքսից հետո նախքան ծլելը կատարել ցանքսի փոցխումը։

10. Քաղհանի և փխրացման աշխատանքը կատարել սեզոնում վոչ պակաս 3 անգամ։

11. 2-րդ քաղհանը և փոցխումը կատարել առաջինից 10—15 որ հետո։

12. Բուկ լցնել և վար գնալու աշխատանքները կատարել յերբ թուփն ունի 18—20 սանտիմ բարձրություն։

13. Այդ աշխատանքների վերջնական ժամկետ սահմանել մինչև կարտոֆիլի ծաղկելը։

Ջրովի հողամասերում առաջին ջուրը տալ ցանելուց 30—40 որ հետո, հետագա ջուրը պահանջածի չափ (1—5 անգամ) ջուրը դադարեցնել բերքահավաքից 25-ր առաջ։

1 5 АПР. 1936 292

14. Բերքահավաքից 15—20 օր առաջ հնձել կարտոֆիլի թփերը և այդպիսին անմիջապես տեղափոխել դաշտից։

15. Ֆիտոոբայի (մրիկի) դեմ պայքարելու համար հուլիս ամսում անցկացնել սրսկում 2 անգամ օգտվելով հատուկ հրահանգից։

16. Բերքահավաքի աշխատանքները սկսել յերբ կարտոֆիլի թփերը սկսում են դեղնել։

17. Սերմացուն ընտրել և այդպիսին փռել արևի տակ չորանալու։

18. Արգելել թաց սերմացուն ամբարելը։

Տրջգործկոմի Նախագահ՝

Գ, ԲԱԲԱՅԱՆ

Քարտուղար՝

Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0957722

1
3880